

Արձանագրություն №2/2012-2013

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2012թ. նոյեմբերի 8-ին տեղի ունեցած թիվ 2 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 61-ը (վաթսունմեկ): Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Ն. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում: (Զեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Ն. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
2. ԵՊՀ-ում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգում փոփոխություններ կատարելու մասին: (Զեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյան)
3. 2012-13 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին: (Զեկ.՝ ԵՊՀ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
4. Տեղեկատվություն 2011-12 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին: (Զեկ.՝ ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
5. ԵՊՀ գիտական խորհրդի՝ համալսարանի ֆինանսական մուտքերի ու ելքերի ուսումնասիրման և օպտիմալացման ժամանակավոր հանձնաժողովի զեկույցը համալսարանի ֆինանսական հոսքերի կառավարման հիմնահարցերի մասին: (Զեկ.՝ ԵՊՀ գիտական խորհրդի՝ համալսարանի ֆինանսական մուտքերի ու ելքերի ուսումնասիրման և օպտիմալացման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Հ. Լ. Սարգսյան)
6. ԵՊՀ անվտանգային հետազոտությունների կենտրոնի կանոնադրության հաստատում: (Զեկ.՝ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ Ա. Գ. Ղևոնդյան)
7. Ընթացիկ հարցեր
 - 7.1. <<Արևելագիտության հարցեր>> ժողովածուն հրատարակության երաշխավորելու մասին:
 - 7.2. Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից էթիկայի մշտական հանձնաժողով ստեղծելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին.- դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը: Մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

	Ազգանուն անուն հայրանուն	Ամբիոնը, պաշտոնը	Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը
1.	Իսկոյան Աիդա Բագրատի	Քաղաքացիական դատավար. Ամբիոնի դոցենտ	Իրավաբան. գիտ. թեկ. /1985/ ԺԲ.00.03 քաղաքացիական իրավ-ք, դոցենտ /1989/
2.	Հայկյանց Արմեն Մերուժանի	Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ	Իրավաբան. գիտ. դոկտոր /2007/, ԺԲ. 00.03 քաղաքացիական իրավ-ք, դոցենտ /2004/
3.	Աբրահամյան Հենրիկ Մուշեղի	Հայաստանի հարակից երկրների պատմ. ամբիոնի պրոֆեսոր	Պատմական գիտ. դոկտոր /1996/, Է.00.00 – պատմություն, դոցենտ /1980/

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը	Գիտական աստիճանը, կոչումը /մասնագիտ. շիֆրը/
1.	Միրզախանյան Նարինե Էդուարդի	հանրահաշվի և երկր. ամբ. ասիստենտ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2008/ Ա.01.00 – մաթեմատիկա
2.	Դանիելյան Իրինա Էդուարդի	ակտուարական մաթեմատիկայի ամբ. ասիստենտ	ֆիզմաթ. գիտ. թեկնածու /2004/ Ա.01.00 – մաթեմատիկա
3.	Առաքելյան Մարինա Սեմյոնի	կենդանաբան. ամբ. ասիստենտ	կենսաբ. գիտ. թեկնածու /2001/ Գ.00.08 – կենդանաբանություն
4.	Ասլանյան Աշոտ Վարդգեսի	կենդանաբան. ամբ. ասիստենտ	կենսաբ. գիտ. թեկնածու /2005/ Գ.00.08 – կենդանաբանություն
5.	Հովհաննիսյան Սմբատ Խանամիրի	համաշխարհային պատմության ամբ. ասիստենտ	պատմ. գիտ. թեկնածու /2010/ Է.00.02 – համաշխարհային պատմություն
6.	Հովհաննիսյան Արփինե Աշոտի	քաղաքացիական իրավ. ամբ. ասիստենտ	իրավաբան. գիտ. թեկնածու /2010/ ԺԲ.00.03 – քաղաքացիական իրավունք
7.	Խանամիրյան Իրինա Ռյուրիկի	անձի հոգեբանության ամբ. ասիստենտ	հոգեբան. գիտ. թեկնածու /2008/ ԺԹ.00.05 – տարիքային և մանկավարժ. հոգեբանություն
8.	Գարգրջյան Լիլիթ Ալբերտի	անձի հոգեբանության ամբ. ասիստենտ	հոգեբան. գիտ. թեկնածու /2008/ ԺԹ.00.05 – տարիքային և մանկավարժ. հոգեբանություն
9.	Կարապետյան Ռուզաննա Ռաֆայելի	անգլերենի թիվ 1 ամբ. ասիստենտ	բանասիր. գիտ. թեկնածու /2006/ Ժ.02.07 - գերմանական լեզուներ
10.	Հակոբյան Հրաչյա Ռաֆիկի	ֆիզ. դաստ. և սպորտի ամբ. դասախոս	ՀՀ սպորտի վարպետ

Թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությանը մասնակցեցին գիտխորհրդի նիստին ներկա բոլոր 61 անդամները:

Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ *Ղարիբյան Գրիշա Ալեքսանի (նախագահ), Մովսիսյան Յուրի Մովսեսի, Սահակյան Անահիտ Ռուբենի, Գասպարյան Վահագն Գևորգի, Միմոնյան Արևիկ Արթուրի:*

Պրոֆեսորի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Իսկոյան Աիդա Բագրատի	54	6	1
2.	Հայկյանց Արմեն Մերուժանի	53	7	1
3.	Աբրահամյան Հենրիկ Մուշեղի	56	4	1

Դոցենտի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Միրզախանյան Նարինե Էդուարդի	59	1	1
2.	Դանիելյան Իրինա Էդուարդի	56	4	1
3.	Առաքելյան Մարինա Մելյոնի	59	1	1
4.	Ասլանյան Աշոտ Վարդգեսի	57	3	1
5.	Հովհաննիսյան Սմբատ Խանամիրի	55	5	1
6.	Հովհաննիսյան Արփինե Աշոտի	52	8	1
7.	Խանամիրյան Իրինա Ռյուրիկի	57	3	1
8.	Գարգրցյան Լիլիթ Ալբերտի	57	3	1
9.	Կարապետյան Ռուզաննա Ռաֆայելի	58	2	1
10.	Հակոբյան Հրաչյա Ռաֆիկի	56	4	1

Արտահայտվեցին. – Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանը, Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Լ. Եզեկյանը, հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ Յ. Մովսիսյանը, գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանը և ՈւԽ անդամ Ն. Մելքոնյանը:

Որոշեցին. - 1.1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

1.2. Վերոնշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1.3. Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

2. **Լսեցին.** - **ԵՊՀ-ում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգում փոփոխություններ կատարելու մասին:** Գ. Գևորգյանը ներկայացրեց փոփոխությունների նախագիծը:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը, ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Ժ. Դումանյանը, Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Լ. Սարգսյանը, կենսաբանության ֆակուլտետի դեկան Է. Ս. Գևորգյանը: Սկզբունքային անհամաձայնության արդյունքում՝

Որոշեցին. – նախագիծը լրամշակել և հարցի քննարկումը տեղափոխել գիտխորհրդի հաջորդ նիստ:

3. **Լսեցին.** - **2012-13 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին:** Ա. Գրիգորյանը ներկայացրեց առկա և հեռակա համակարգերում բակալավրիատի և

մագիստրատուրայի ընդունելության արդյունքները ըստ մասնագիտությունների՝ համեմատելով դրանք 2010-11 ուստարվա արդյունքների հետ:

Որոշեցին. – Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին. - **Տեղեկատվություն 2011-12 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին:** ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ, ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանը ըստ կրթական ծրագրերի ներկայացրեց 2011-12 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղումը

Որոշեցին. – Ընդունել ի գիտություն:

5. Լսեցին. - **ԵՊՀ գիտական խորհրդի՝ համալսարանի ֆինանսական մուտքերի ու ելքերի ուսումնասիրման և օպտիմալացման ժամանակավոր հանձնաժողովի զեկույցը համալսարանի ֆինանսական հոսքերի կառավարման հիմնահարցերի մասին:** Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, ԵՊՀ գիտական խորհրդի՝ համալսարանի ֆինանսական մուտքերի ու ելքերի ուսումնասիրման և օպտիմալացման ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Հ. Լ. Մարգարյանը ներկայացրեց հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկումների արդյունքները:

Որոշեցին. –

1. Հավանություն տալ ժամանակավոր հանձնաժողովի կողմից ներկայացված և ԵՊՀ ֆինանսական մուտքերի և ելքերի օպտիմալացմանը միտված հարցադրումներին և առաջ քաշված սկզբունքներին:
2. Արձանագրել, որ ԵՊՀ ներկա կառուցվածքի և կառավարման եղանակի պայմաններում գրեթե սպառվել են ֆինանսական վիճակի էական բարեփոխման հնարավորությունները: Հիմնախնդիրների համապարփակ և ամբողջական վերլուծության ու առաջարկությունների մշակման նպատակով ստեղծել համապատասխան մասնագետներից կազմված **աուդիտորական** հանձնաժողով, որը պայմանագրային հիմունքներով կմշակի և ԵՊՀ ռեկտորին, ու այնուհետև ԵՊՀ խորհրդի հաստատմանը կներկայացնի ԵՊՀ առաջիկա 3-5 տարիների զարգացման սցենարները՝ ներառելով կառուցվածքային և կանոնակարգային փոփոխությունների համալիր ծրագիր:
3. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և վարչական, ուսումնա-օժանդակ, սպասարկող ծառայությունների աշխատակիցների հարաբերակցությունը շտկելու նպատակով հրատապ համարել աշխատանքների նկարագրության /անձնագրավորման/ համակարգի ներդնումը՝ մշակելով այդ համակարգի գործառնման ընդհանուր սկզբունքներն ու չափանիշները:
4. ԵՊՀ-ում կոնկրետ մասնագիտություններով ընդունելության թվաքանակը որոշելիս հիմքում դնել մասնագետների պահանջվածության գործոնը՝ ընդունելության պլանավորման հարցը հատուկ քննության առարկա դարձնելով ԵՊՀ գիտական խորհրդում: Միաժամանակ փաստել, որ բարեփոխման կարիք ունեն նաև ԵՊՀ-ում գործող մագիստրոսական ծրագրերը ըստ կազմի, կառուցվածքի և ֆինանսավորման սկզբունքի:
5. Մշակել և ներդնել ուսման վարձավճարների զեղչման նոր համակարգ՝ զեղչերը փոխհատուցելով կրթաթոշակների տրամադրմամբ:

6. Հաշվի առնելով ԵՊՀ աշխատակիցների աշխատավարձերի ցածր լինելը և ԵՊՀ բյուջեի խիստ սահմանափակ հնարավորությունը խնդրին ակնկալվող լուծում տալու համար, ԵՊՀ գիտական խորհուրդը միջնորդում է ԵՊՀ խորհրդին՝ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարությանը ԵՊՀ-ին լրացուցիչ ֆինանսական միջոցներ տրամադրելու խնդրանքով:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

6. Լսեցին. – ԵՊՀ անվտանգային հետազոտությունների կենտրոնի կանոնադրության մասին:

Կանոնադրության նախագծի ամբողջովին պատրաստ չլինելու պատճառով ռեկտոր Ա. Միմոնյանի առաջարկությամբ հարցը տեղափոխվեց գիտխորհրդի հաջորդ նիստ:

7.1 Լսեցին. - <<Արևելագիտության հարցեր>> ժողովածուն հրատարակության երաշխավորելու

մասին: Հաշվի առնելով, որ հանդեսի հրատարակումն ընդհատվել է 2006թ.-ից, որ Մերձավոր և Միջին Արևելքի տարատեսակ զարգացումների քննությունը ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն, կարևորելով հանդեսի պարբերաբար հրատարակման վերականգնումը՝

Որոշեցին. –

1. Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի կողմից պատրաստված <<Արևելագիտության հարցեր>> գիտական հանդեսի 7-րդ հատորը երաշխավորել հրատարակման:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

7.2. Լսեցին. - Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից էթիկայի մշտական հանձնաժողով ստեղծելու մասին:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, պրոռեկտորներ Ա. Գրիգորյանը, Գ. Գևորգյանը, Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը:

Որոշեցին. – Հաշվի առնելով Երևանի պետական համալսարանում առողջ բարոյաժողովրդական մթնոլորտի պահպանման և այդ հարցում ԵՊՀ գիտական խորհրդի հանձնառության անհրաժեշտությունը՝

1. Ստեղծել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդին կից էթիկայի մշտական հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1. Գրիգորյան Մարատ Արիսի – Աշխարհագրության և երկրաբանության ֆակ.-ի դեկան,
2. Բաղդասարյան Ալեքսան Ստեփանի – Փիլիսոփայության և հոգեբանության ֆակ.-ի դեկան,
3. Ավագյան Արծրուն Արզարի – Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան,
4. Բալայան Պավել Բորիսի – Ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան,
5. Սահակյան Անահիտ Ռուբենի – Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ,
6. Քարամյան Ռաֆֆի Արայի – ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ,
7. Աբգարյան Գևորգ Կամոյի – Ռադիոֆիզիկայի ֆակ.-ի մագիստրատ. 2-րդ կուրսի ուսանող

2. Հանձնարարել հանձնաժողովին մեկամսյա ժամկետում ստեղծել և ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել հանձնաժողովի աշխատակարգը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

14.11.2012թ.